# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

# Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան “01” փետրվարի _2011 թ.

## Հ Ր Ա Մ Ա Ն № 07 Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՄԱՏԵՂ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

«ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2011» ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (ԳՊԿ) և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի (ՀՀԲՀՀ) միջև 2010 թվականի նոյեմբերի 4-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագիրը, գիտական ծրագրերի աջակցության ֆինանսավորման շրջանակներում անցկացվող « ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2011 » մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

**1.** ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ Գ. Մելիքսեթյան)՝ եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հայտարարության և հրավերի փաթեթի տեղադրումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայք:

**2.** ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական

հաշվառման բաժնին (պետ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

**3.** ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Լ. Մարդոյան)՝

1) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի ընդունումը և հաշվառումը,
2) մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,
3) 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպել հայտերի տեխնիկական ստուգումը և դրանց տրամադրումը փորձագիտական մասնագիտական խորհրդին,
4) 30 օրացուցային օրվա ընթացքում ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,
5) 5 աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել գիտական փորձաքննության արդյունքները, դրանք ներկայացնել փորձագիտական մասնագիտական խորհրդին,
6) 10 աշխատանքային օրվա ընթացքում մրցույթի արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով տեղեկացնել գիտական թեմաների ղեկավարներին,
7) մինչև 2011թ. ապրիլի 29-ը կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

**4.** Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ